



Գոչունեան (Բասիմ), Միւլքիյէի վարժարանէն վկայեալ Յովհաննէս Յէրիւսեան և Արսէն Արսէնեան, պրագէտ ու ճարտարագետ Լեւոն Զարիֆեան, փաստաբան Կարապետ Ռափայէլեան (Կարնեցի) և ուրիշ լազմաթիւ ընկերներ, որոնց հետ միշտ շփման մէջ լինելով, նոյնիսկ ֆիլոսոփական և կրօնական տակ ուսանողական միութիւն մը կ'ազմած էի. չքաւոր ուսանողներուն օգնելու և բարձրագոյն վարժարաններու ուսանողները իրարու հետ շփման մէջ գնելու նպատակով:

Նոյն գոկտոնութեան տիփլոսմ Եգիպտական կառավարութիւնէն վաւերացնելով է, որ այսօր իրաւունք եմ ստացել Եգիպտոսում ազատապէս բժշկութեան արհեստ ի գործ գնելու իբրև գոկտոն բժշկութեան և վերաբուժութեան, և ընտրուած իսկ եմ Աղէքսանդրիայի բժշկական ընկերութեան (Société Médicale d'Alexandrie) անդամ: Բացի այդ, տարիներ առաջ, իբրև վկայեալ գոկտոն իրաւունք եմ ստացել աշխատակիցներու (Collaborateur) ցանկին մէջ մտնելու Պարիզում հրատարակուած (La Médecine Orientale) բժշկական կիսամսայ հանդէսին, գրելով զանազան առողջապահական և փորձարկան բժշկութեան վերաբերեալ արիւժեանալ յօդուածներ (Travaux Originiaux). Նաեւ Պարիզում 1902-4 թուին լոյս տեսած 2827 էջերէ և 3 հատորներէ բաղկացած L'Etat actuel de la Chirurgie Nerveuse հոյակապ գործին աշխատակցած եմ, Պարսկաստանի բաժինը առանցիկն վերցնելով. (ապացոյցները յղած եմ Ե. Հ. ի խմբագրութեան):

Գոկտոնութեան տիփլոսմ և իրաւունք ունենալու մասին այսչափ, իսկ եթէ Ա. Տ. իր գրուածքներով և ակնարկութիւններով ճիշդ կը յիշատակեն Պոլսոյ բժշկական դպրոցին արժէքը և հետեւաբար անոր ընթացատրուները, շատ ձիւղակի կը գտանայ մեզ յիշեցնելով «կոչկա կար կոչիկէզ փեր մի» երկերս առածը: Եւրոպայի, Ամերիկայի, Ռուսաստանի և Յունաստանի բժշկական դպրոցներէն վկայեալ բժիշկներ շատ են քանակ, որոնք ձեր չը հաւնած Պոլսոյ բժշկական դպրոցէն վկայեալներէ շատ ցածր աստիճանի վրայ կը գտնուէին իրենց բժշկական հրատարակութեամբ և փորձառութեամբ, իրենց մտաւորական զարգացման պաշարով: Բժշկութեան մէջ առաջին տեղը բռնողը բժշկական ընդունակութիւնն (Tact Médicale) է, ամեն գպրոց ունի իր ընդունակ և անունդունակ ընթացաւարտները: Ձեր յետին մտքի ակնարկութիւններով երբէք չը նսեմանար իմ հմտութեանս արտի-

ճանը, որ 15 տարիէ ի վեր իմ հիւանդները չափել ու հասկացել են:

Այսօր Պոլսոյ հրատարակին մէջ անուն շահող և գործող 86 հայ բժիշկներէն (գեւ չեմ յիշեր որիչ քաղաքներ և օտար երկիրներ գործող հայ բժիշկները, ինչպէս նաեւ ուրիշ ազգէ, բայց Պոլսոյ բժշկական դպրոցէն ընթացաւարտ բժիշկները) 54ը Պոլսոյ բժշկական դպրոցէն ընթացաւարտներ են (տես Ա. Փ. Ազգ. Հիւանդանոցի 1904 ընդարձակ օրացոյցը, էջ 543-545), որոնց մէկ քանին յիշեմ—գոկտոն Էսմէրեան (ակնաբոյժ), գոկտոն Աճէմեան Տիրգրան Պէյ (ակնաբոյժ) գոկտոն Անանեան Ճիփան Պէյ (քթ-կոկորդի մասնագէտ), գոկտոն Արզումանեան (կնիստաբոյժ) գոկտոն Մասիս, գոկտոն Պապանեան Տիրգրան փաշա, գոկտոն Սեյիւսեան, գոկտոն Տատուր (ակնաբոյժ-քթ-կոկորդի):

Այս երեք փաստ:  
Դոկ. Կ. Փաշայեան-խան (Շարունակելի)

### ՊԱՏԵՐԱԶՍ

Պորտ-Արթուրի յարձակումէն ետք թշնամիները իրար գեւ չեն հանդիպած, գոնէ մինչեւ կիրակի պատերազմի վայրէն այդ մասին սեւէ լուր չէ եկած: Երկու կողմերն ալ իրենց ուժերը կը քաշեն դէպի կօրէայի հիւսիսային կողմը, ուր և հաւանականաբար տեղի պիտի ունենայ մեծ ճակատամարտը:

Եւրոպայի մէջ մասնագէտներ և զինուորական մարդիկ արդէն սկսած են պատերազմի ելքի մասին մամուլի մէջ ենթադրութիւններ ընել և հետեւողութիւններ հանել անոնցմէ: Արդհետեւ մասնագէտներու կարծիքը մեծ արժէք ու կշիռ ունի: Մենք քաղաքացիներ յարմարի մը «Յայթի» մէջ յայտնած հետեւեալ միտքերը: Պորտ-Արթուրի յարձակումէն ետքը—կրտէ նա—առուական նաւատորմի կարիք է ընդունիլ իբրև պարտուած: Ծառոնական նաւերու թէ քանական և թէ բարեյական ոյժը այնքան մեծ է, որ մեծ գեր չպիտի կարողանան խաղալ Վլատիփօստովէն և Եւրոպայէն օգնութեան հասնող առուական նաւերը: Ռուսի ճարտարներու համար այլևս դժուար չէ զօրաց և ռազմաբարձիք արդ փոխադրութիւնը դէպի Կօրէա:

Ռազմագիտական տեսակէտով ճարտար կը գտնուի Ռուսիայէն անհամեմատ աւելի նպատարաւոր պայմաններու մէջ: Կարճ ժամանակէն ան կարող է 300,000 զին-

ուոր փոխադրել կուրի վայրը, մինչդեռ Ռուսիոյ այս պարագային պիտի հանդիպի մեծ գծաւորութիւններու: Ծառոնացիք շատ ճարպիկ ու շատ խելացի սկսան գործը և յուսալի է, որ անոնք մինչեւ վերջ ալ այսպէս պիտի տանին պատերազմը: Ծառոնական զօրքը առաջին անգամ է, որ գէմ գիմաց պիտի կանգնի Եւրոպական կանոնաւոր բանակի մը, ուստի փորձութիւնը մեծ է, բայց երբ անգամ մը այդ փորձանքէն ազատի, առուական բանակը կ'իյնայ ծանր դրութեան մէջ:

Ռուսիա իր զօրաց բազմութեամբ կարող էր շատ աւելի ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ, բայց զօրքը կը գտնուի Ռուսիոյ մէջ, որու փոխադրութեան համար կայ միայն մէկ գիծ մը. այս գիծն ալ ունի զարձեալ խոշոր պակասներ և անկանոնութիւններ: Եթէ նոյնիսկ չըլլային այդ թիւութիւնները պաշարի, ռազմամթերքի և զօրաց փոխադրութիւնը նորէն կը ներկայացնէր ահագին գծաւորութիւն: Մաս առ մաս պիտի փոխադրուին գունդերը և ճարտար ամենայն դիւրութեամբ կարող է զարնել այդ մասերը, եթէ Ռուսիա այժմ Մանչուրիոյ մէջ չունի պէտք եղածին չափ զօրք, պիտի իյնայ շատ վատ դրութեան մէջ:

Իրը թշնամի բանակին վրայ ակնարկ մը ձգենք. մէկ կողմ կը տեսնենք առուական զինուորը, հնազանդ, հլու, քիչով գոհացող, սովոր, որը դրած տեղը կը կենայ մինչեւ որ իյնայ: Բայց ճարտար զինուորը հնարագէտ է, անկախ, աչքը բաց ու դիւրաշարժ: Պէտք չէ մտնալ նաեւ որ այս պատերազմը ճարտարներուն համար ազգային պատերազմ մըն է, մինչդեռ առաջ ժողովրդի ահագին խաւերը պատերազմին վրայ կը նային իբրև լուռ ու անտարբեր հանդիսատեսներ: Այս հաշտով բարոյական տեսակէտով ալ ճարտար կը գտնուի աւելի նպատարաւոր պայմաններու մէջ քան Ռուսիա:

Ճակատամարտը, որ կը սպասուի ցամաքին վրայ, պիտի վճռէ մէկին կամ միւսին բազում: Յաջողութեան ու յաղթանակի նախանկատութիւնը սակայն կը գտնուի աւելի ճարտար կողմը: Մտտիկ ապագան պիտի պարզէ ամէն ինչ:

Մարզպետներ

### ԻՆՉ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ

Ֆիլիպպի Մասնախումբին

Եւր օրինաւոր կերպով ընտրուած թաղականութիւնները պարտաւոր են կարեւոր խնդիրներու համար ժողո-

վորակին կամքը. կարծիքը առնել, որքան աւելի ֆիլիպպի ներկայ Մասնախումբը որ ժողովուրդին քուէով չէ բնորոշած, այլ իրենք իրենց եկած են թաղային գործերու ղեկը ձեռք առնելու. պարագայ մը, որ ոչ մէկ ասին խնդրոյ նիւթ չեմ բրած, իրենց շատ մը աչքի գարնող յոռի կողմերուն հետ, ահսելով օգտակար ըլլալու ճիգերին բաղադրամա նա, խորհներուն:

Բայց ինչպէս կերեւայ, Մասնախումբը կը նայի իր պաշտօնին վրայ—եթէ կարելի է պաշտօն ըսել— ալ աչքով. ինչ աչքով որ կը նայի իր մտադրոյն վրայ, և սկսած է բոլորովին սիրեպիլական ընթացք մը բռնել:

Այսօր ֆիլիպպի Մասնախումբը առանկ քայլ մը առնել որոշեր է, որ եթէ շիտակ է, թիւրիմացութիւն չկայ լրամաս մէջ, ոչ միայն ժողովուրդին իրաւունքներուն դէմ տրեպիլական ոտնձգութիւն մըն է, սլլեւ ֆիլիպպի հայ եկեղեցիին շահերուն ալ բռնաբարւած մը:

Ահա խնդիրը:  
Մեր Մասնախումբը փոխանակ յիմար կերպով ժողովուրդին դրամները պիտի չի ներու կողորդը չի լեցնել աշխատելով կարեւորներու պարտքերը և տուրքերը տարուէ տարի վրա ճարելու. ան վնասակար գաղափարը յղացեր է ֆիլիպպի եկեղեցիին սեփականութիւնը միայն եղող կալուածները վարժարանին վրայ դարձնել, տուրքերէ ազատ մնալու համար, և աս գործը յաջողցնելու համար մինչև Սօֆիա ալ մարդ զրկեր է:

Ասանկ յիմար և վնասակար քայլ մը առնել—մանաւանդ Ռուսաստանուն պատահած դասն իրողութիւններէն ետքը— շատ դատապարտելի է: Ձեռք գիտեր թէ որո՞ւ մը որու կուտայ Մասնախումբը, և ո՞վ են իրենք: Հիմա բացարձակ իրաւունք ունինք հարցնելու մեր Մասնախումբին:

Ա.— Իրաւունք ունէ՞րք, ստանց ճոյնիսկ օրինակիս մարմին մը ըլլալու, ձեր քէյֆը ուզածին պէս կարելի կապել սասնկ կարեւոր խնդիր մը:  
Բ.— Աս յիմար քայլը առնելէ առաջ նկատի չունեցանք վարկեան մը, որ Պոլսկարիոյ մէջ թաղային կամ ազգային վարժարանները կը ճանչցուին կառավարութեան իբրև մասնաւոր վարժարանը այսինչ հայ եկեղեցիին, հետեւաբար վաղը վարժարանական նոր օրէնք մը կը նայ անոնց տարբեր ձեւ տալ:

Թող Մասնախումբը հաճի գոհացնել իմ և ինձի հետ շատերու աս հետաքրքրութիւնը, իսկ եթէ թիւրիմացութիւն մը կայ, թող հաճի հրապարակով ուղղել, գայթակղած մտքերը հանդարտեցնելու համար:

Հակառակ պարագային սակայն ինչ միջոց ձեռք պիտի առնէ ֆիլիպպի տեղացի տարրը, աս օտնձգութեան հանդէպ, Կարծէ որ հետաքրքրուինք:

Թողալից

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻՆ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ահա ձեզ մեծ բառերով, խոշոր իմաստով, կարգացողներուն ո՞վ գիտէ ինչեր մտածել տուող վերնապիւր մը. բայց թող ընթերցողը միտքը չը յղենցնէ սեսակ տեսակ պարտակաւորութիւններ, անձնագոհողութիւններ

երեւակայելով հայ աղջկան համար, չէ՛, հեռուները երթալու պէտքը չկայ, այս օրուան օրս հայուհւոյն միակ, գլխաւոր պարտականութիւնը կը կա յանայ, գիտէ՞ք ի՞նչի՞—ազգ. պարահանգիտ երթալու մէջ, Հապա ի՞նչ կարծեցիք, երեւի կարծեցիք, որ հին պատմութիւնը յիշելով Սպարտացի կիներէն, իսկ նորերս Պօլիսէիցէն, Շաքէներէն, Սօսիներէն օրինակներ պիտի բերեմ եւ ըսեմ ահա հայուհւոյն թղնելիք ճամբան. քաւ լիցի՛, Շքուի, զարդարուի, պարելի, ցատկել, միթէ՛ շարք մը պարտականութիւններ չնո՞ն:

Փառք Աստուծոյ, մեր Ֆիլիպէի հայ օրիորդներու մեծ մասն ալ զգաց սզլի համար գործելու վսեմ պարտականութիւն պահանջը եւ սկսաւ պատրաստուիլ. պարահանգիտի: Այլ ինչ իրարանցում ըսես չկայ, ի՞նչ ետանդաւ խօսակցութիւններ—օհագուստդ ի՞նչ գոյն է, թեւերը, վիզը քանց թէ՛ գոց կարել, պիտի ասս, ո՞ր գոյնը ինծի կը վայել, ախ պարելը պէտք է լաւ տրվիմ: Եւ ուրիշ ասոց նման սրտածայիկ խօսակցութիւններ, կեղծերը, առաջ ո՞ր մէկը մտածեն թիւր, տանդէլան, լաւ տեսակ կօշիկները թէ ինքզինքնին չհաւնեցնելու վախը: Ախ, ի՞նչ դրժուար է ազգի համար աշխատիլ, ազգի համար հոգալ:

Չարմանալին ան է, որ հայ մայրերը, պարահանգիտ համար եղած ժամանակ ազգ բառէն, սատանայէ վախցածի պէս չեն դող ելլար: Կան մայրեր, եւ մեծամասնութիւնը անանկներ են, որոնք եթէ ըսես աս կամ ան ընկերութեան համար ձեր աղջկան օժանդակութեան պէտք կայ, կամ օրինակի համար ըսես Տիկին, քաղաքիս մէջ աղջկանց երգեցիկ խումբ կայ, որքան շատ ըլլան օրիորդները, օգուտը այնքան շատ կըլլայ, թոյլ կուտա՞ք որ ձեր օրիորդը մասնակցի, վայ ըսողին, յանկարծ հայ մայրը, այնպէս վերադարձի գէմը կառնէ, որ կարծես ընտանիքի համար կարգ մը անպատուարեր հայհոյանքներ եւ ըբեր: Ի՞նչ, իր աղջկը ըսմ ելլայ, աս կամ ան ընկերութեան համար տունէ տուն, փողոցէ փողոց պտտի, իր աղջկը մանչու պէս ազգի համար մտածէ, ի՞նչ ամօթ, մեղայ տէ՛ր, աղջիկներու կը վայլէ՞ այդ սեռակ գործերու:

խառնուիլ, բեմ իլլալ եւ ժողովրդին առջեւ անամօթաբար երգել: Եւ այսպէս բեմ կամ խումբ բառերէն իսկ համեստութիւնը վերաբերուող հայ մայրի՛նք իր ձեռքով կը զուգէ, կը գործարէ, վիզն ու թեւերը բանալ կուտայ իր աղջկան եւ առանց ամօթի ա՛նհնափօքը նշոյլի, իր աղջիկ—ապրանքը կը տանի պարահանգէս—խառնութիւն, ուր հաւնեցնելու կամ ծախելու գոնէ յոյսը ունի: Ի՞նչ ամչնալու բան կայ հոս:

Պարեցուցէ՛ք ձեր աղջիկները հայ մայրի, ցատկեցէ՛ք հայ օրիորդներ, որքան որ փափաքիք բայց ի սէր ինչի որ ուզէք, ազգային բառը բերանիդ մի առնէք, չէ՛ք զգար որ սարին մէկ անգամ գործածուած այդ բառը օտար է, խորթ է ձեր բերնին, չէ՞ք զգար որ պարով գիշերմ մը անցնելու համար պատճառ եղած ազգ բառը սիրազորութիւններուն ամենամեծն է, գողութիւն է անոնցմէ, որոնք աս բառին համար իրենց արիւնը, կեանքը կուտան, կախաղան կը բարձրանան, իրենց երիտասարդ տարիքով, գուակ, կին, նշանած թողած՝ մութ բանտերու մէջ կը փրփրին: Եթէ՛ դուք ազգերնուս այս ճգնաժամին, իբր արցունքը արիւնխառն կը հոսի ամենուն աչքերէն, եթէ՛ դուք այսքան գոհերէ ետքն ալ կը գոհանաք ձեր ցատկելէն զգացած հանդիպում եւ պարտաւելով ան աղջիկները, որոնք կուզեն գոնէ հիւզելի չափ օգտակար ըլլալ գործին, դե՛հ, պարեցէ՛ք, պարեցէ՛ք ու պարեցէ՛ք, բայց զիտցէ՛ք, որ նուազի յարմարելու համար ձեր ըրած լամէն մէկ նապելի շարժմաներով, քայլերով, անհրաժեշտ ու վսեմ պարտականութիւններ է որ կը կոխտէք:

Պիճի  
(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թաւրիչ 8 Յուն. 1904

Մարաղայից մի բարեկամ գրում է ինձ հետեւեալ հետաքրքիր նամակը. որի գլխաւոր կէտերը աւելորդ չեմ համարում հրատարակութեան տալ, նամանանանգ, որ այդ ինձ թոյլ է տրւած:

«Սիրելի բարեկամ, դու հարցիւմ

ես թէ՛նչու՞ Մարաղայի հայ ժողովուրդը չէ աջակցում ոչ մի կերպ յեղափոխական գործին: Ինչպէս գիտես Մարաղան մի գիւղաքաղաք է որի բնիկ ժողովուրդը մեծ մասամբ հայերէն խօսել չգիտէ, գրել կարգալ գիտեցողները հազուադէպ են. պարզ է ուրեմն, որ մի այդպիսի ժողովուրդ չէր կարող մտածել անգամ յեղափոխութեան մասին: Այդ հասարակութեան յեղափոխուելու պարտականութիւնը մասամբ ընկնում է թաւրիչից եկած դանադան առեւտրական տան ներկայացուցիչների, դրսեցիների վրայ. բայց թէ ի՞նչ չափով հէտց այդ դրսեցիները իրենք են հասկանում յեղափոխութեան անհրաժեշտութիւնը. այդ մի հարց է. որ ես մէկ կողմ եմ թողնում. բայց թէ ընդունենք, որ նրանք մինչեւ իսկ արմատացած յեղափոխականներ են. նորից չէին կարող բնութեան մէջ թոխըներ գործել, յեղափոխական դարձնել մի անգամից այն ժողովուրդին. որը մայրենի լեզուով խօսիլ չը գիտէ, Հասկանանք յեղափոխել բառը իր լայն իմաստով, Մարաղացիք երախտապարտ պիտի լինեն դրսեցիներին, որովհետեւ նրանք մասամբ կատարել են իրենց պարտականութիւնը. Մարաղացի հայր, եթէ այսօր գիտէ շատ ու քիչ հայերէն խօսել, եթէ նա ունի դպրոց եւ գրադարան, եթէ նա աղջիկների համար շինել է ուսումնարան եւ կազմել Փօնդ, այդ բոլորի համար նա պարտական է դրսեցիներին: Ինչպէս ասեցի, նախ քան այդ բոլորը յեղափոխութեան մասին խօսելու առաջին մէջ սերմ դանել կը նշանակէր. այժմ է միայն, որ պէտք է մատաղ սերունդի մէջ ցանել այդ ազգօգուտ հատիկները: Ընդունելով միանգամայն անուրանալի ճշմարտութիւնը, որ մեռնող սերունդի վրայ չպէտք է յոյս դնել, մեր այժմեան ուսուցիչները պէտք է որ մատաղ սերունդին կրթէին այդ փրկարար ոգով:

Այժմ տեսնենք, թէ այդ կողմը կրողները ինչպէս են կատարում իրենց պարտականութիւնը...»

Իմ բարեկամը երկար կանգ է առնում երկու ծայրայեղ ուսուցիչներին բնաւորութիւնների վերայ, ցաւելով նկարագրում է մէկի ֆալցիթութիւնը, միւսի սօնջիտութիւնը եւն եւն:

Մենք այդ բոլորը թողնում ենք եւ առաջ ենք բերում հետեւեալ հետաքրքիր, բայց ցաւալի կտորը:

«Վերջին ժամանակներս լոյս են ընկել մեզ մօտ մի քանի բազմախնդիր շեւպայով սրիկաներ, որոնք յանուն հայ յեղափոխութեան կողուպտում եւ շահատակում են մեզ, այդ աֆերիստները համարում են իրենց հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ, ո՞րքան ճիշդ է չը գիտենք, բայց ճիշդ է այն որ այդ կուսակցութեան անունով թախնում են մեզ Վերջերս այդ կուսակցութեան օգտին ներկայացում տրեց, տոմսակներ չգնողները ստացան ըսպանական նամակներ, մի քանիսից պահանջեց զանազան քովանդակութիւն կրող նամակներով 20-200 թուման փող: Մի պարոն, որ ստացել էր 200 թուման վճարել պարտաւորեցնող մի նամակ, կանչում է իր մօտ ազգականներից մէկին եւ ցոյց տալիս նամակը, հարցնում է թէ ի՞նչ կարող է անել ինքը. այդ ազգականը կանչում է նամակ բերող... ներին եւ մի կերպ համոզեցնում 50 թումանով դո՛հ լինել. լօթիքը 50ը կանխիկ տոնելուց յետոյ, նորից պահանջում են 200ը, ասելով, որ այդ 50ը վերցրին իբրեւ տուգանք նամակը ուրիշին ցոյց տալու համար:

Թատրոնից եւ այլ միջոցներով հաւաքած փողը թաւրիչ են ուղարկում եւ զէնքեր գնում, բայց դու մի կարծիր բարեկամս, որ այդ զէնքերը պէտք է ուղարկեն երկիր տառապող եղբայրակիցներին օգնելու համար, ո՛չ, այլ զէնքերը Մարաղա պիտի բերեն, տգէտ ժողովրդին տառապելու համար, Հանդէսներում կամ այլ տեղերում ինչ որ հնչակեան երգ երգելիս պահանջում են հանդիսականներին ոտքի կանգնել, հակառակ դէպքում սպառնալիք, 'ի՛նչ' այժմ դու ասա բարեկամ, թէ ի՞նչ սրտով կարող է գործի կաշիլ—մօտենալ յեղափոխական Ս. Գործին Մարաղացի տղաքէտ ժողովուրդը, երբ նա առաջին անգամ աչքերը բաց անելիս տեսնում է այդքան տխուր պատկերներ...»

Այս նամակը չէ միայն Հնչակեան անունը շահագործող զանազան խումբակների կեղտոտութիւնները եւ ստորութիւնները ապացուցանող փաստը. Մի քանի ամիս առաջ մի ինչ որ խելքից բորիկ նշանակած էր

ՄԹՆՁԱՂԻՆ

(Պատկերաձևեր):  
ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ  
ԹՇՆԱՍԻՆԵՐԸ

Անգամբերի մօթ երեկոյ մը ժամը տասնին աստիները Դիֆտիրիտէն մեռաւ գիւղական բժիշկ Գիրիլովի վեց տարեկան միամօր զաւակը:

նալու առանց թիկնոցի, բաճկոնը բաց, առանց թաց երեսը սրբելու եւ առանց քալալուն այրուած ձեռքերը շորցնելու: Եւ այն մարդը որ ներս մտաւ կը տեսնուէր միայն որ միջահասակ էր, ըսպիտակ գլխարկ մը կը կրէր եւ աչքի կիյնար իր անհունօրէն տգոյն գէմքովը: Այն աստիճան աժգուհած էր, որ կարծես թէ սոյ գէմքի երեւոյթով նախասենեակը կը լուսատորուէր:

— «Բժիշկը տո՛ւնն է՞» — հարցուց նեխ մանուղը անպարանօք:

— «Տունն եմ» — պատասխանեց բրժիշկը — «Ի՞նչ կը կամենաք»:

— «Ախ, դո՛ւք էք, շատ ուրախ եմ» — ըսաւ օտարականը ուրախացած եւ մթութիւնն մէջ անոր ձեռքը կը փնտոէր, զսաւ եւ երկու ձեռքով զայն ուժով մը սղմեց:

սէր Աստուծոյ մի մերժէք իսկոյն ինձ հետ միասին դալու... կինս լուրջ հիւանդացած է... կառքը պատրաստ կեցած է...» ներս մտնողի ձայնէն ու շարժուածքներէն կ'իմացուէր, որ ան ծայրահեղ յուզման մէջ կը գտնուէր:

Հրդեհէ մը կամ կատղած շունէ մը վախցած մարդու մը պէս հազիւ կը կարողանար կարճ կարճ շունչ առնել, արագ եւ ցաւոտ սրտով կը խօսէր ան: Ինչպէս ամէն սարսափածներն, ան ալ կտրտուած նախադասութիւններով կը խօսէր եւ շատ աւելորդ բաներ կը նէր, որոնք խնդրին չէին վերաբերեր:

— Կը վախնալի, որ ձեզ տունը չը գտնեմ — առաջ տարաւ ան իր խօսակցութիւնը, ձեզ մօտ գալու պահուս, չարարեցի հոգիս... հանգուցեցէ՛ք միասին երթանք ի սէր Աստուծոյ... այսպէս պատահեցաւ... Փափայինքին զիս այցելեց, Ալեքսանտր Սեմեօնովիչը, զոր դուք արդէն կը ճանչնաք... քիչ մը խօսեցանք... յետոյ նստանք թէյ խմելու, յանկարծ կինս ելաւ

ձեռքը սրտին սեղմելով եւ ընկաւ աթոռը յենարանին վրայ, վերցուցինք եւ անկողին տարինք եւ... ջուրները նիշատրի օգիւղ չիցեցի եւ երեսին ջուր սրկեցի... բայց ան մեռելի մը պէս ընկած է... կը վախնամ թէ աս անէօյրիկով ըլլայ... եկէ՛ք... կնքըս հայրը անէօյրիկովէն մեռաւ...»

Գիրիլովը մտիկ կ'ընէր ու կը լռեր, կարծես թէ ուսերէն չէր հասկնար, երբ Ապօկինը նորէն Փափայինսին եւ իր կնոջ հայրն յիշեց, եւ նորէն ձեռքը բռնել կաշխատէր, բժիշկը գլուխը փարտելով ըսաւ, ամէն բան անզգայարար արտասանելով — «Եներեցէ՛ք, ես չեմ կրնար գալ... մօտաւորապէս հինգ վայրկեան առաջ իմ... իմ որդին մեռաւ...»

— «Աս կարելի՞ բան է» — մրմնջեց Ապօկինը քայլ մը յետ երթալով — «Աստուած իմ, ինչ չար ժամի եմ հոս եկած, արտակարգ շարաբաստիկ օր մէջ այսօր... տարօրինակ բան է, ինչ զուգահիւսութիւն եւ ան ալ այսօր —»  
(Շարունակելի)

պրոպագանդիստ թաւրիգում, եւ խեղճ խելագարը մի կտոր թուղթ եւ մի մատիտ առած ձեռքը ընկել էր փողոցները պատահած նորեկներին եւ 14-16 տարեկան երեխաներին առաջարկում էր հնչակեան գրեւէ Ժամհարեանի ղէպքի առիթով վայնասուն անողները, այսօր 10-20 թուամսի համար տետրների սպառնալիքներ են կարգում:

Այսպիսի նամակներ եւ ղէպքեր տեսնողին մնում է միայն խղճալ այդ կուսակցութեան վրայ, որի կազմը քարուքանդ լինելուց յետոյ բեկորները սկսել են...

Ասկանիկ

Յիշույթ 28 Յունուար

Անցած կիրակի բաւական հանդիսաւոր կերպով Յիշույթի մէջ ալ տունեցաւ Լիւսիւն Գարալէլովի 25 ամեակը:

Առտուն խուն բազմութիւն մը ներկայ էր պուլկարական մայր եկեղեցին: Հոգեհանգստի արարողութենէն ետք բազմութիւնը ուղղուեցաւ Գարալէլովի փողոցը, ուրտեղ գտնուած պուլկարական մէկ վարժարանը ատանուով մկրտուեցաւ: Կատարուեցան ճարտասութիւններ:

Եթէ հայ մանուկը եւ թաղային վարժարաններու ուսուցիչները իրենց աշակերտներով մասնակցած չլլային թափորին եւ հոգեհանգստին, հայերու հոծ ներկայութիւնը բանով մը աչքի չի պիտի զարնէր: Ի՞նչեւ տակը պարպ կերպու Սիւրիւտը-Հոգաբարձուներն ալ եկեր էին, բայց չի նայած սիւրիւտիներուն ա'յնքան բարձր եւ փայլուն ըլլալուն, նորէն ուշադրութիւն չի դարձուցաւ խեղճներուն վրայ:

Կէսօրէ ետք պուլկարներու կողմէ արուած ցերեկոյթին մասնակցեցաւ երգեցիկ խումբը մէկ նիւմէրօ երգով եւ առաւօտեան տափակութիւնը ծածկեց: Երգեցիկի մասնակցութիւնը շատ լաւ սպաւորութիւն թողոյց Պուլկար հասարակութեան վրայ, այնպէս որ, 5-10 վայրկեան անընդատ ծափերով կրկին բեմ ելնել պահանջեցաւ, ցերեկոյթը սարգով յանձնախումբին անդամն էր հայերէն՝ Ս. Գրիգոր Թամիրեանց:

Աս ընդունելութիւնը ի հարկէ երգեցիկէն առաջ հայ հասարակութեան համար պատուաբեր էր, որ երգեցիկը իր մասնակցութեամբ հայ հասարակութեան մասնակցութիւնը ներկայացուց: Եւ հետեւաբար կ'արժէր հոսքանի մը խօսք ընել այն մարդոց համար, որոնք սակաւին չեն ըմբռնած երգեցիկի օգտակարութիւնը: Ինչպէս նաեւ այն մարդոց համար, որոնք կը գովեն սոսոս շնչտով, կընդունին օգտակար եւ պատուաբեր գործ մը ըլլալը, բայց երբ կարգը կուգայ մասնակցութեան կամ զոհողութեան, այն ատեն մէկ կողմ կը քաշուին եւ նոյնիսկ ձեռքի սակէ կ'արգիլեն իրենց սողոց կամ օրիորդներուն մասնակցութիւնը:

Ինչ որ է, ուրիշ ատիւ մը անդրազանամ ստոր թերեւս:

Թղթակից

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիլիկիոյ կաթողիկոսը հանգանակութիւն մը ըրած է ի նուստ վարժարաններու: Պոլսոյ պատ-

րիարքը նոյնպէս մեծ խնամք կը տանի դպրոցներուն:

Ամէն տեղ հայը կը գտնուի իր կոչման հաւատարիմ եւ նուիրուած է կրթական գործին: Մեզ կը զարմացնէ միայն պուլկարահայերու ընդհանրապէս եւ Վառնայի հայերու մասնաւորապէս ղէպի դպրոցը ցոյց տուած անտարբերութիւնը: Վառնայի ազգ. պըպրօցներու ինպատեմէն տարի կը արուէր ներկայացում, այս տարի չը տրուեցաւ, կը տրուէր պարահանդէս, օրերը կ'անցնին եւ գեռայս մասին ալ ձայն չելաւ: Վարժարաններու ի նպատ փիճակահանութեան կը գրուէին աշակերտուհիներու պատրաստած ձեռագործները: Սօփիայէն հրամանը եկած է, թիւերը շարուած են, բայց գեռ փիճակահանութիւնը չըլլար: Արգիւնք, Արգիւնք ալ է, որ վարժարանի մէջ չկան նոյնիսկ կանոնաւոր գրասեղաններ: Արի խոշոր պակասութիւններու մասին ալ կը լռենք:

Պատրիարքը յանձնախումբ մը պիտի կազմէ եղբր մանկապարտէզներու համար մանկական երգեր պատրաստել տալու նպատակով:

Գանձակի եւ Ախալքալաքի մէջ հայ տեսօրիտներ սպաննած են երկու ոստիկան: Ազգապաշտօնային մէջ սպաննուած է հայ մատինիշ մը:

Կանչելի, Էջմիածնի Սինօղի տխրահնչակ պրօկուրօրը պաշտօնանկ ըլլալէ զատ զրկուած է համազգեստէ եւ թօշակէ: Անոր տեղ եկած է հրէութիւնէ, դարձող ռուս մը:

Ինչպէս յայտարարուած է, Վառնայի ՊԱԶԳԱՆՍԻՆԱՄԸ շաբաթ երեկոյան կուտայ պարահանդէս մը: Վառնայի հայ հասարակութիւնը պէտք է յաջալիբէ շքաւորներու ի նպատ այս ձեռնարկը:

ՊՅՄԻՍ Հայրիկի Յարին ուղղած նամակները հրատարակելով սուտ կը հոչակէ մօտ Բլէվէի այն առարկութիւնը թէ՛ գրաւումը կատարուած է հայ եկեղեցոյն շահերը ի նկատի ունենալով: Վիեննական թերթը ռուս կառավարութեան այդ քայլը կ'անուանէ պաշտօնական աւաղակութիւն եւ ժողովրդի դարուոր իրաւունքներուն բռնարարում:

Կիւմանանք, որ վաղը Վարդանանց տօնի առթիւ եկեղեցւոյն մէջ պիտի ըլլայ հանդէս:

ՊՀայրենիքէն կը տեղեկանանք որ Հ. Յ. Գալանկոնիան կօմիտէն 1902-1903 տարեշրջանին մէջ ունեցեր է 64368,50 Ֆր.ի մուտք, որու մեծագոյն մասը զրկուած է երկիր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Փոթորիկէն առաջ կը տիրէ խաղաղութիւն, այսպէս ալ հիմա Բօրթ-Արթուրի վրայ եղած յարձակումէն ետքը կը տիրէ խաղաղութիւն, որմէ վերջը սակայն փոթորիկը պիտի պայթի սարսափելի ահաբեկութեամբ: Երկու կողմէն ալ կը պատրաստուին ցամաքի վրայ դարձուելու: Ճակատամարտը հաւանականաբար տեղի պիտի ունենայ Քօրէայի հիւսկոյժը ետու գետին ակերուց վերայ: Ճարտիւ Բօրթ Արթուրը զարկած է իր բանակներու տեղափոխութիւնը ապահովելու եւ զիւրացնելու համար: Ան կ'ուզէ 100.000 զօրք եւ հանել Մանչուրիոյ կամ Քօրէայի ցամաքին վերայ:

Քօրէայի մայրաքաղաք Սէուլ ճարտիւցիներու ձեռքը իյնալէ ետք Սէուլի ռուսական զբաղանք ստիպուած է իր հպատակներով Ալմուրո մեկնիլ: Ճարտիւցիական զօրքի պաշտպանութեան տակ, զինուորական պատիւներով ռուսական զբաղանք մեկնած է ղէպի Ալմուրո:

Տրէզորը ի տեղի ինչոց գործարանները 2 միլիոն ռուպլի արժուութեամբ պաշար պատրաստելու համար սպազարնք ստացած են: Թուսիոյ կողմէն այդ նպատակը պայսպրուած է մինչեւ յառաջիկայ Սեպտեմբերի համար, ուրիմն ըստ այս լուրին պատերազմը պիտի տեւէ շատ երկար:

Պատերազմական նախարար Բուրապօսկին գեռ չէ մեկնած ղէպի Մայրաքոյն Ա. եւելք:

Ճարտիւցի խիստ պահանջներ գրած է, որ Արմաստան պահէ կատարել շէջօրութիւն:

Բէքենկի մէջ պատերազմին պատճառով կը տիրէ մեծ յուզում: Արմաստանի Մայրաքաղաքին մէջ ոգեւորութեամբ ընդունուած է Բօրթ-Արթուրի առաջեւ ռուսական նաւերու զարնուելուն լուրը:

Միքաա Սուլթուհիթօ իր յայտարարութեան մէջ կը շնչտէ որ ճարտիւցի պատերազմի միջոցին պիտի յարգէ միջազգային պատերազմական օրէքները: Ճարտիւցիական կայսրը պատերազմին իբրեւ պատճառ կը նշանակէ Ռուսիոյ կողմէն Քօրէայի անկախութեան ղէմ եղած ոտնձգութիւնները եւ կնքուած դաշնագիրներու ոգիին ղէմ Ռուսիոյ բռնած ընթացքը: Միքատիոյ յայտարարութիւնը ձգած է լաւ սպաւորութիւն: Իսկ Յարի յայտարարութիւնը մէկու մը վրայ ալ համոզիչ տպաւորութիւն չէ ձգած:

Վիեննայի մէջ անգլիացի դիւանագէտ մը «Յայր» խմբա-

գիրներէ մէկուն հետ Անգլիոյ շէջօրութեան մասին խօսելով, յայտնած է, որ Անգլիա անպատճառ Ռուսիոյ ղէմ կուտի զուկ'ուգայ, երբ ճարտիւցիական լու նշաններ ցոյց տայ, որովհետեւ Ասիոյ մէջ Ռուսիոյ յառաջխաղացումը մահացու հարուած կը հասցնէ անգլիական շահեհուն:

Անգլիա, Արթուրի, Կերմաստան եւ ուրիշ պետութիւններ պաշտօնապէս շէջօրութիւն յայտարարած են:

Քօրէայի մայրաքաղաք Սէուլ գրաւուած է ճարտիւցիներու կողմէ: Թագաւորը բռնած է վերջիններու կողմը:

Ճարտիւցիական նաւատորմիկն վրայ կը հրամայէ ծովակալ Խեկօ, սր առաջին վայրկեանէն իսկ փայլեցաւ Բօրթ-Արթուրի մէջ: Ի՞նչօր, 55 տարեկան զինուորական մըն է եւ իր կրթութիւնը առած է Անգլիոյ մէջ:

ՇԻՒՆ ՊԱՐԱՀԱՆԻՒՄ

Ի նպատ Վառնայի աղքատսինամիւն

Պատի ունինք ծանուցանելու Վառնայի աղքատսէր հայ հասարակութեան թէ յառաջիկայ շաբաթ զիւր, ժամը 9ին Մալտիէնիէ սրահին մէջ տեղի պիտի ունենայ ընտանեկան շքեղ պարահանդէս մը գիտակաւոր եւ անդիմակ ի նպատ աղքատսինամ ընկերութեան վառնայի: Այս առթիւ ուրախութիւն ունինք նաեւ յայտարարելու թէ՛ ազնիւ ու բարեսէր ազգայիններէ յատկապէս կազմուած մասնախումբ մը ստանուած է տոմսակները վաճառելու հողը: Կը խնդրենք ուրիմն տեղոյս հայ հասարակութեանէն, որ բազմաթիւ շքաւոր հայրենակիցներու օգտին համար կազմակերպելի սոյն երեկոյթին փութայ մասնակցել թէ ողորմասիրական պարտ մը կատարած ըլլալու եւ թէ՛ գերազանձապէս հաճելի ժամանց մը վայելելու համար: Ի դիմաց Աղք Ընկ: Գործադիր ժողով (ԿՆԻՔ) Վառնա 3 փետր 1994

ՇՔԵՆ ԵՐԿԿՅԱՅՈՒՄ

Փետրվար 5ին, վաղ երեկոյեան ժամը 8ու կէսին «Սանթրալ» թատրոնին մէջ:

Ա.

Վ. ՄԱՍԻՒՈՒՆԵ ԼԻՆ

ուղբերգութիւն 3 արարուածով Բ.

Կենդանի պատկերներ Միջոցներուն պիտի նուագէ «Սոխակ» նուագախումբը: Լաւ տեղ գրաւել ուղղուելը թող փութան տոմսերը օր առաջ գնել:

«Սիրողներու խումբ»

Отговорникъ Мурадъ-Франосянъ Педатнича, Взаимность Варна